

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

18 հունիսի 2007 թ.  
ք. Երևան

N 131-Ն

### Հ Ր Ա Մ Ա Ն

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԻ ԿԱՄ ԲԱԺԱՆԻՉ (ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ) ՀԱՇՎԵԿՇՈՒՎ ՎՐԱ ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով և 13-րդ հոդվածի 7-րդ մասով.

#### *ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝*

1. Սահմանել, որ իրավաբանական անձանց վերակազմակերպմամբ (բացառությամբ վերակազմավորման դեպքերի) պայմանավորված պետական գրանցումներ կատարելուց հետո ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի ղեկավարը ներկայացված փոխանցման ակտի կամ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռի վրա կատարում է «Սույն փաստաթղթի համաձայն պետական գրանցումը կատարված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից \_\_\_\_\_ 200 թ.» բովանդակությամբ նշում:

2. Սահմանել, որ իրավաբանական անձանց վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումներ կատարելուց հետո ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման ղեկավարը ներկայացված փոխանցման ակտի վրա կատարում է «Սույն փաստաթղթի համաձայն պետական գրանցումը կատարված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի համապատասխան տարածքային բաժնի կողմից \_\_\_\_\_ 200 թ.» բովանդակությամբ նշում:

3. Սահմանել, որ նշում կատարելուց հետո պետական ռեգիստրի ղեկավարը (վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման դեպքում՝ տարածքային ստորաբաժանման ղեկավարը) ստորագրում և կնքում է փաստաթղթի (որը պետք է պարունակի տեղեկություններ կազմված օրինակների քանակի, օրինակի հերթական համարի մասին) ներկայացված բոլոր օրինակները:

**Գ. Դանիելյան**